

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԽԱԿԱՆ ԳՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ  
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆՈՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ:

Կովկասի Տ. Փոխարքան անցեալ 1913 թ. յունուարի 31-ի № 3310 գրութեամբ դիմում է Ազգիս Վեհափառ Հայրապետին, որտեղ հիմնուելով՝ նահանգական ընդհանուր հաստատութեան Ա հատորի 272 յօդուածի և Ներքին գործոց Նախարարութեան Ոստիկանական Դեպարտամենտի 1910 թ. ապրելի 7-ի № 56034 շրջաբերականի վրայ՝ խընդում է Վեհափառին կարգադրել՝ որ հայ-լուսաւորչական եկեղեցական-ծխական դպրոցներում ուսուցիչուսուցչունիներ նշանակելիս, ինչպէս և նրանց մէկ նահանգից միւսը փոխադրելիս՝ նախապէս հարցնեն համապատասխան նահանգապետների համաձայնութիւնը։ Անկախ Տ. Փոխարքայի գրութիւնից—միաժամանակ մի քանի թեմակալ առաջնորդներ նահանգի տեղական բարձր իշխանութիւնից ստանում են առաջարկութիւն կատարելու Տ. Փոխարքայի յիշեալ կարգադրութիւնը։ Այդ առթիւ առաջուց տարածայնութիւնն արդէն սկսուել էր կարսի նահանգապետի և Երևանի փոխ-թեմակալի մէջ։ Տ. Փոխարքայի կարգադրութիւնից յետոյ՝ Վեհափառ Հայրապետի կոնդակից առաջ, Երևանի նահանգապետը պաշտօնապէս պահնջում է տեղական փոխ-թեմակալից իւր 21 փետրուարի 1913 թուի № 16114 գրութեամբ՝ որ նախարար ուսուցիչներ նշանակելը ստանայ իւր հաճութիւնը։

Այդ գրութիւնը Երևանի փոխ-թեմակալը ներկայացնելով Վեհափառ Հայրապետին պաշտօնապէս վետրվ. 26 № 612 յայտարարութեամբ, ինդրում է հրահանգել իրեն «Թէ ինչպէս պէտք է վարուել որպէսզի ի նկատի առնելով առաջանալիք դժուարութիւնները ժամանակին հասրաւորութիւն ունենամ հարկաւորը կարգադրել»։

Վեհափառ Հայրապետան ի նկատի առնելով՝ որ յիշեալ շրջաբերականը գործադրելիս կարող են ծագել տարածայ-

Նութիւններ և անախորժ գէպքեր նահանգապետների և հայ թեմերի թեմակալ առաջնորդների մէջ, բարւոք համարեց, ուրաքս ժամանակաւոր միջոց, Կոնդակով հրամայել թեմակալ առաջնորդներին կատարել Տ. Փոխարքայի յիշեալ կարգադրութիւնը, յուսալով անձամբ տեսնուել Տ. Փոխարքայի հետ մօտիկ ապագայում և, պարզելով իւր հայեացը, որ այդ շրջաբերականը չէ կարող վերաբերուել բացառիկ արտօնութիւններով վերաբացուած հայոց եկեղեցական դպրոցների ուսուցիչներին, խննդել փոխել այդ կարգադրութիւնը: Այնուհետև Կովկասի Տ. Փոխարքան երկարատև հիւանդութիւն ունեցաւ ու բացակայեց ամիսներով Կովկասից և միւս կողմից էլ մէջ տեղ կար «Հայկական հարցը»՝ գէպք չեղաւ Վեհափառին ուսուցիչների վերոյիշեալ հարցի մասին անձամբ խօսել Տ. Փոխարքայի հետ:

Ներկայ 1914 թ. յունուարի 8-ին Վեհափառն մի ընդդրձակ զրութեամբ զիմեց Կովկասի Տ. Փոխարքային, միջնորդելով որ հայոց եկեղեցական ծխական դպրոցների ուսուցիչների և ուսուցչունիների նշանակման մասին եղած նոր կարգադրութիւնը վերացուի եւ պահպանուի նախկին ձեւը: Իւր զրութեան մէջ Վեհափառ Հայրապետն զրել է Տ. Փոխարքային ի միջի այլոց հետեւալը.

«Պարտք եմ համարում ներկայացնել Զերդ Պայծառափայլութեան իմ զիտողութիւնները վերոյիշեալ հարցի մասին՝ որ յուզում է Խնձ, յուզում է և ոչ պակաս չափով ամեռողջ հայ ժողովրդին, որը միշտ զգայուն ուշադրութեամբ է վերաբերուել գէպի այն ամենը՝ ինչ որ առնչութիւն ունին նորա եկեղեցու և եկեղեցական դպրոցների հետ, որոնք ներկայանում են որպէս ժողովրդական հաստատութիւն: Հայ ժողովրդի մէջ եղած յուզումը բացարւում է նրանով, որ յիշեալ կարգադրութիւնը խախտում է մինչև այժմ գոյութիւն ունեցող միանգամայն օրինական և զըպրցական նպատակներին համապատասխան կարգը . . . . . \* . . ապա Վեհափառն ասում է. «Իսկ ինչ վերաբերում է հայոց եկեղեցական դպրոցների վերահսկողութեանը՝ այդ-

պիտին փաստօրէն և իրաւապէս գոյութիւն ունի և արտայաւում է հետեւալ ձեւըով.

1. Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսը՝ որպէս ազգայի և որպէս Միապետի գերագոյն վստահութեան արժամացած անձն՝ ներկայացնում է այս իշխանութիւնը, որին ստորագրեալ հոգևորականներով և հաստատութիւններով հաւատացած է՝ ըստ Հայոց եկեղեցու սոլոժենիայի (XII հատոր I մ.) Հայոց եկեղեցական գլորցների վիճակը։ Հայոց գլորցները իւրեանց ամբողջ գոյութեան պատմութեան ընթացքում գտնուել են Հայոց կաթուղիկուների անմիջական կարգադրութեան տակ և կառավարուել են նոցանից բղմած հրահանգներով և ցուցումներով . . . . . և այլն։

Վեհափառ Հայրապետի միջնորդութիւնը յարդելով  
Տ. Փոխարքան իւր 1 ապրիլի 1914 թ. № 9958 գրութեամբ  
յայտնում է Նորին Սրբութեան որ հնարաւոր է համարում  
յարգել Վեհափառի միջնորդութիւնը եւ փոխել նախա-  
կին կարգադրութիւնը Հայոց եկեղ. ծխ. դպրոցների ու-  
սուցիչների նշանակման մասին։ Այսուղ բերում ենք  
թարգմանաբար ամբողջութեամբ Տ. Փոխարքայի գրութիւնը։

### Ձեր Արքութիւն,

Ի հետևումն սոյն տարրուայ 8-ն յունուարի թիւ 95  
նամակի, պատիւ ունիմ տեղեկացնել Զերդ Սրբութեան,  
որ ուշագրութեան առնելով նոյն նամակի մէջ առաջ բե-  
րած Զեր խնդիրը, ես հնարաւոր համարեցի փոխել Հայ-  
լուսաւորչական եկեղեցական ծխական գլորցների ուսու-  
ցիչների նշանակման կարգը հետեւալ կերպով։ Հայութ-  
սաւորչական թեմական առաջնորդները իրաւունք ունեն  
այսուհետեւ անմիջապէս նշանակել ուսուցիչներ վերոյիշեալ  
դպրոցներում, բայց իւրաքանչիւր անգամուայ նշանակման  
մասին պարտաւոր են անյապաղ հաղորդել պաշաճ նա-  
հանգապետին՝ տեղեկութիւններ տալով նշանակուած ու-  
սուցչի անձի, նորա նախկին պաշտօնավարութեան մասին  
և այլ հիմունքներ, որոնք անհրաժեշտ կը լինին յիշեալ

պաշտօնական անձին իրականացնելու նահանգական ընդհանուր հաստատութեան 286 յօդուածով իրեն վերապահուած վերահակողութեան իրաւունքը նահանգում գտնուած պաշտօնատար անձանց վերաբերեալ:

Իրազեկ դարձնելով Կովկասի նահանգապետներին ներկայումս գոյութիւն ունեցող հայ լուսաւորչական եկեղեցական ծխական գպրոցների ուսուցիչների նշանակման ձևի այդ տեսակ փոփոխութեան մասին՝ ես դիմում եմ Զերդ Սրբութեան ամենախոնարհ ինզրով, չմերժել կարգադրելու որ հայ լուսաւորչական թեմական առաջնորդները կատարեն վերոյիշեալը: Յանձնելով Խոճ Զեր սուրբ աղօթքներին խորին յարգանքի զգացումով և լիակատար անձնուիրութեամբ պատիւ ունիմ լինել Զերդ Սրբութեան ամենախոնարհ ծառայ Կոմս Վարանցով 'Խաչկով:

S. Փոխարքայի այս գրութիւնը ստանալով՝ բոլոր առաջարդներին Վեհափառն իւր 13 ապրիլի 1913 թ. կոնդակով ուղղում է հետեւեալ շրջաբերականը՝

ԳԵՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԽ ԱՆՀԱՍՏԵԼԻ Կամօքն Ս.ԱՏՈՒԾՈՅ Եպիսկոպոսապես ԵԽ Կաթուղիկոս Ս.ՄԵՆԱՅԻՆ Հայոց Մայրաքոյն Պատրիարք Համագգական Նախամեծաց Ս.ԲՈՈՐՈՅ Արարատեան Առաջելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Եղմիածնի Գերապատիւ Առաջնորդի Թեմին Հայոց . . . . .

ՑՑ-ն յունուարի տարւոյս թ. 96 գրութեամբ դիմելով առ Տ. Փոխարքայն Կովկասու, բացատրեցաք մանրամասնաբար գամենայն հանգամանս և զպատմական պայմանս Եկեղեցական-Ծխական գպրոցաց մերոց, զարտօնութիւնս և զիրաւունս հոգևորականութեան Հայոց, բացատրեցաք նաև զպատճառս և գհանգամանս ժամանակաւոր կարգադրութեան մերոց յանուն առաջնորդաց ի 10-ն մարտի անցելոյ 1913 ամի, և ապա ինզրուցաք ի նորին Պայծառափայլութենէ փոխել զկարգադրութիւն իւր, վերահաստատելով զօ-

ըինաստման և դաւանդական կարգ նշանակելոյ և հաստատելոյ զուսուցիչս և զուսուցչուհիս ի ձեռն հոգեոր իշխանութեան և հոգարաքծութեանց, եկեղեցական-ծխական դպրոցաց մերոց, առանց կանխազոյն հաւանութեան նախնականաց:

Յայսմ աւուր ընկալաք ի Տ. Փոխարքայէն զգբութիւն պատասխանի, ի 1-ն ապրիլ ամսոյս ընդ համարաւ 9958, զվաւերացեալ պատճէն որոյ ընդ ամին առաքեմք առ Զեզ, յորմէ ունիք տեղեկանալ, զի նորին Պայծառափայլութիւն բարեհաճելով փոխել զնախկին կարգադրութիւն, յայտնէ, զի Առաջնորդ Հայոց ունին իրաւունս, առանց կանխազոյն հաւանութեան նահանգապետաց, նշանակել զուսուցիչս և յետ նշանակելոյ միայն պարտ է յայտնել պատշաճաւոր նահանգապետի տեղեկութիւնս զնախկին պաշտօնափարութենէ նոցաւ:

Ի նկատ առեալ Մեր զիսաղաղ լուծումն խնդրոյն, այսու Հայրապետական Կոնդակաւս ընդ միշտ դադարեցուցանելով զիրագործումն կարգադրութեան Մերոյ ի 10 մարտի անցելոյ 1913 ամի որ յանուն Զեր, և փոխելով զայն, պատուէք տամք Գերապատութեանդ՝ վարիլ յետ այսորիկ ըստ նախկին օրինասահման և աւանդական կարգի եկեղեցական-ծխական դպրոցաց մերոց՝ նշանակելով և հաստատելով զուսուցիչս և զուսուցչուհիս ի պաշտաման իւրեանց, և ապա թէ անմիջապէս առաքել զցուցակ նոցա պատշաճաւոր նահանգապետի ըստ մտաց վերոյիշեալ գրութեան Տ. Փոխարքայի:

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ, Ամէն:

Դէմք Ե. ԿԱՐՈՒՂՅԱՌՈ

ԱՄԵՆԱՑՆ Հ.Յ.Ա.Ց.

<sup>13</sup> ապրիլ 1914 ամի

ըստ Տոմարիս ՌՅԿԴ

ի Հայրապետութեան Մերում Գ. ամի  
յԱրարատեան Մայր Աթոռ Ս. էջմիածնի

ի Վաղարշապատ

թ, 501.